Պատմություն և մշակույթ
History and Culture

2024 № 21 (1)

https://doi.org/10.46991/hc.2024.21.1.082

On the Military-Political Conditions of the 1918 Turkish Intervention in the Artsakh City of Shushi

Mher Harutyunyan
https://orcid.org/0000-0002-0719-8860
NAS RA, Institute of History, Researcher, Department of Modern History, PhD, Associate Professor
hamher@yandex.ru

Keywords: World War I, Shushi, Artsakh government, Turkish occupiers, artificial Azerbaijan, Musavatist policy of conquest, state terror

The policy of state terror and ethnic cleansing pursued by Turkey in Western Armenia, the pinnacle of which was the genocide of indigenous peoples - Armenians, Greeks and Assyrians - was exported to Eastern Transcaucasia in 1918, where a puppet Azerbaijan Republic was created with Turkish bayonets with a stolen name and unimaginable territorial claims. Only two years of the existence of democratic Azerbaijan are characterized by bloody strife, unpunished policies of state terrorism and ethnic cleansing. A significant part of the Armenian population of Eastern Transcaucasia became its victim; hundreds of thriving settlements were set on fire and destroyed, and the centuries-old cultural values of the Armenian people were mercilessly destroyed, looted or appropriated.

The Turkish occupiers, with the active participation of the Musavatists, first destroyed the villages of the Berdadzor subdistrict, cutting off the region from Zangezur, in order to suppress the resistance of the Armenians of Artsakh by force of arms. In 1918, the commander of the 2nd Turkish division stationed in Aghdam sent an ultimatum to the Artsakh government. Then, on September 22, 1918, accompanied by local armed Tatars, the occupiers invaded sovereign Nagorno-Karabakh, destroying all border settlements with intense artillery fire. On September 25 of the same year, Turkish military units, accompanied by thousands of Tatars who wanted to destroy and plunder the occupied settlements, entered Shushi.

Արցախի Շուշի քաղաք 1918 թ. թուրքական ներխուժման ռազմաքաղաքական հանգամանքների մասին

Մհեր Հարությունյան

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 82-92

Received: 09.06.2024
Revised: 09.07.2024
Accepted: 31.08.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

ՀՀ ԳԱԱ, պատմության ինստիտուտ, նորագույն պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հիմնաբառեր՝ Առաջին աշխարհամարտ, Շուշի, Արցախի կառավարություն, թուրք զավթիչներ, արհեստածին Ադրբեջան, մուսավաթական նվաճողական քաղաքականություն, պետական տեռոր

Արևմտյան Հայաստանում Թուրքիայի վարած պետական տեռորի ու էթնիկական զտումների քաղաքականությունը, որի բարձրակետը հանդիսացավ բնիկ ժողովուրդների՝ հայերի, հույների, ասորիների ցեղասպանությունը, 1918 թվականին արտահանվեց Արևելյան Անդրկովկաս, որտեղ թուրքական սվինների վրա ստեղծվեց Ադրբեջանի խամաճիկային հանրապետությունը՝ գողացված անունով ու տարածքային աներևակայելի հավակնություններով: Ժողովրդավարական հորջորջված Ադրբեջանի հազիվ երկու տարվա գոյությունը բնութագրվում է արյունալի նախճիրներով, պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների անպատիժ մնացած քաղաքականությամբ: Դրան զոհ գնաց Արևելյան Անդրկովկասի հայ ազգաբնակչության զգալի մասը, հրկիզվեցին ու ավերվեցին հարյուրավոր ծաղկուն բնակավայրեր, անխնա ոչնչացվեցին, կողոպտվեցին կամ յուրացվեցին հայ ժողովրդի բազմադարյան մշակութային արժեքները:

Թուրք զավթիչները մուսավաթականների գործուն մասնակցությամբ Արցախի հայության դիմադրությունը զենքի ուժով ճնշելու նպատակով նախ ավերեցին Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը՝ երկրամասը կտրելով Զանգեզուրից: Ադդամում տեղակայված թուրքական 2-րդ դիվիզիայի հրամանատարը վերջնագիր ուղարկեց Արցախի կառավարությանը: Ապա տեղի զինված թաթարների ուղեկցությամբ 1918 թ. սեպտեմբերի 22-ին զավթիչները ներխուժեցին ինքնիշխան Լեռնային Ղարաբաղ՝ լարված հրետակոծությամբ ավերելով սահմանային բոլոր բնակավայրերը: Թուրքական զորամասերը գրավված բնակավայրերն ավերելու և կողոպտելու նպատակ հետապնդող բազմահազար թաթարների ուղեկցությամբ Շուշի մտան նույն թվականի սեպտեմբերի 25-ին:

О военно-политических условиях турецкой интервенции 1918 года в Арцахский город Шуши

Мгер Арутюнян
НАН РА, институт истории, научный сотрудник отдела современной истории, кандидат исторических наук, доцент

Ключевые слова: Первая мировая война, Шуши, правительство Арцаха, турецкие оккупанты, искусственный Азербайджан, мусаватистская завоевательная политика, государственный террор.

Проводимая Турцией в Западной Армении политика государственного террора и этнических чисток, вершиной которой стал геноцид коренных народов - армян, греков и ассирийцев, в 1918 году была экспортирована в Восточное Закавказье, где на турецких штыках была создана марионеточная Азербайджанская Республика с украденным именем и невообразимыми территориальными претензиями. Всего два года существования демократического Азербайджана характеризуются кровавыми распрями, безнаказанной политикой государственного терроризма и этнических чисток. Его жертвой стала значительная часть армянского населения Восточного Закавказья, сотни цветущих поселений были подожжены и уничтожены, а многовековые культурные ценности армянского народа были безжалостно уничтожены, разграблены или присвоены.

Турецкие оккупанты при активном участии мусаватистов сначала разрушили села Бердадзорского субрайона, отрезав край от Зангезура, чтобы силой оружия подавить сопротивление армян Арцаха. В 1918 году командир 2-й турецкой дивизии, дислоцированной в Агдаме, направил ультиматум правительству Арцаха. Затем 22 сентября 1918 г., в сопровождении местных вооруженных татар, оккупанты вторглись в суверенный Нагорный Карабах, разрушив все приграничные поселения интенсивным артиллерийским обстрелом. 25 сентября того же года турецкие воинские части в сопровождении тысяч татар, желавших разрушить и разграбить оккупированные населенные пункты, вошли в Шуши.

* * *

Ներածություն՝ Հայաստանում Թուրքիայի նվաճողական քաղաքականության համակողմանի ուսումնասիրությունն ու անհրաժեշտ դասերի վերհանումը կարևոր ու արդիական են մանավանդ Արցախի Հանրապետության դեմ 2020 թ. աշնանային ագրեսիայի ընթացքում թուրքական պետական ու ուժային կառույցների ակտիվ մասնակցության ու ազդեցիկ դերակատարության բացահայտման, ապա՝ նաև Ռուսաստանի Դաշնության համաձայնությամբ Ադրբեջանում ռազմաքաղաքական ներկայության հաստատումից հետո հայկական պետականությանը նետված մարտահրավերների հաղթահարման պատմաքաղաքական փաստարկումներն ու տեսական հիմնավորումները ուժեղացնելու տեսանկյունից: 2020 թ. նոյեմբերի 8-ին Շուշի քաղաքի հանձնման պատճառներն ու ռազմաքաղաքական հանգամանքները հասկանալու համար արդիական է Շուշիի 1918 թ. անկման նորովի վերաիմաստավորումը պատմական զուգահեռների ու համադրումների միջոցով:

Բացի գիտական ընդհանուր մեթոդներից (վերլուծություն, նկարագրություն բացատրություն և հատուկ ճանաչողական այլ միջոցներից)՝ սույն հետազոտության հիմքում պատմականության սկզբունքն է և պատմական ու համեմատական մեթոդը:

Ձեռնարկելով սույն հոդվածը՝ նպատակ ենք ունեցել թուրքական բանակի 1918 թ. աշնանային ռազմարշավում Շուշի քաղաքի ինքնապաշտպանության ձախողման պատճառների վերաբերյալ հայ պատմագրության գնահատականների հիման վրա երևան հանելու դրանց պատմաքաղաքական, ռազմագիտական տեսանկյունները և արդի մարտահրավերների հետ համադրմամբ կատարելու համապատասխան հետևություններ ու անհրաժեշտ եզրահանգումներ:

Առաջադրված նպատակին հասնելու համար հետամուտ ենք եղել հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմանը.

ա) ներկայացնել թեմայի ուսումնասիրության աստիճանը, ինչը թույլ կտա որոշարկել գիտական հարցադրումը, ինչպես նաև հոդվածի հեղինակի տեղն ու դերը հիմնախնդրի ձևակերպման ու գիտականորեն պարզաբանման գործում,

բ) սահմանել Շուշիի անկման պատճառների շուրջ հայ պատմագրության առաջադրած գաղափարների ու տեսակետների ռազմագիտական բաղադրիչները,

գ) իրականացնել պատմագիտության հիմնական գործառույթներից պատմության դասերի վերհանումը թույլ տրված վրիպումների ու բացթողումների իրական, հաճախ լռության մատնված, չքաղաքականացված ու չենգափոխված պատճառների համապատկերի վրա,

գ) զուգահեռներ անցկացնել ավելի քան մեկդարյա վաղեմության ռազմաքաղաքական դեպքերի ու արդի մարտահրավերների միջև՝ անհրաժեշտ եզրահանգումներով նպաստելով ժամանակակից պետական-քաղաքական ու անվտանգային-պաշտպանական կենսունակ համակարգի ու ապագա զարգացումներին համահունչ ռազմաքաղաքական ճիշտ օրակարգի ձևավորմանը:

Սույն հոդվածի գիտական նորույթի առանցքը կազմում են վերոհիշյալ գիտական հարցադրումը և շրջանառվող ու նորահայտ փաստերի ռազմագիտական-քննական վերլուծության հիման վրա միանգամայն նոր եզրահանգումները և, ընդհանրապես, հետազոտական արդյունքները:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: Արևմտյան Հայաստանում Թուրքիայի վարած պետական տեռորի ու էթնիկական զտումների քաղաքականությունը, որի բարձրակետը բնիկ ժողովուրդների՝ հայերի, հույների, ասորիների ցեղասպանությունն էր, 1918 թ. տարածվեց Արևելյան Անդրկովկասում [Սողոմոնյան 1972, 185-196, Հարությունյան 2015բ, 12-20], որտեղ թուրքական սվինների վրա ստեղծվեց Ադրբեջանի խամաճիկային հանրապետությունը (ԱԴՀ)՝ գողացված անունով ու տարածքային աներևակայելի հավակնություններով: Ժողովրդավարական հորջորջված Ադրբեջանի հազիվ երկու տարվա գոյությունը բնութագրվում է արյունալի նախճիրներով, պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների անպատիժ մնացած քաղաքականությամբ [Վիրաբյան(խմբ.) 2003, Բեհբուդեան(կզմ.) 2001 և ուրիշն.]: Դրան զոհ գնաց Արևելյան Անդրկովկասի հայ ազգաբնակչության զգալի մասը, հրկիզվեցին ու ավերվեցին հարյուրավոր ծաղկուն բնակավայրեր, անխնա ոչնչացվեցին, կողոպտվեցին կամ յուրացվեցին հայ ժողովրդի բազմադարյան մշակութային արժեքները [Աբրահամյան 2003, Թումյան 2008, Իշխանյան 1999 և ուրիշն.]:

Հատկապես ծանր էր Արցախի երբեմնի մայրաքաղաք Շուշիի կորուստը: 1920 թ. մարտին հրի մատնվեց ու հիմնահատակ ավերվեց Անդրկովկասի ծաղկուն քաղաքներից մեկը [Հարությունյան 2013, 22-43]: Անգթորեն մոխրակույտերի վերածվեցին դարերի ընթացքում ստեղծված ու համամարդկային նշանակություն ունեցող արժեքները, որոնք արարած մարդիկ դաժան հաշվեհարդարի զոհ դարձան:

Այդ ամենի մասին գրել է ժամանակի մամուլը [Մշակ, 4.3.1920, № 9,2-3, Յառաջ, 26.2.1920, № 42,1, Մշակ, 13.6.1920, № 37, 2-4], մանրամասներ են հաղորդել ժամանակակիցները [Լեո 1925, Կիսիբեկյան 2011 և ուրիշն.), ականատեսները [Միքայելյան 1923, Ստեփանեան 1934, 83-93, Melik-

Shahnazarov 1996 և ուրիշն] իրենց հուշագրություններում: Ծանր կորստի թեման զբաղեցրել է առաջադեմ մտավորականների, գրողների ու բանաստեղծների միտքը, որոնք իրենց խոհերն ու մտածումները, սրտի ցավն ու ափսոսանքը գեղարվեստորեն արտահայտել են գրավոր և բանավոր խոսքով [Мандельштам 1990, 183, Հարությունյան 1997, Хзмалян, 1991, 89-92]:

Քանի որ 1918-1920 թվականների պատմագրության հիմնահարցերը համակողմանիորեն քննվել են հեղինակավոր պատմաբանների աշխատություններում [Լեո 1925, Սողոմոնյան 1972, Галоян, Худавердян(ред.) 1988, Микаелян, Хуршудян 1988, Микаелян(ред.) 1992, Ուլուբաբյան Բ. 1994, Հարությունյան 2019 և ուրիշն], նպատակահարմար չէ դրանք կրկնել, մանավանդ որ առավել կարևորներին անդրադարձել ենք սույն հոդվածի հետագա շարադրանքի համապատասխան էջերում:

Ակներև է, որ թեև թեմային անդրադարձած նախորդ ուսումնասիրողներն ու հեղինակները մեծածավալ աշխատանք են կատարել, սակայն բավարարվել են հիմնախնդրի առանձին տեսանկյունները՝ պարզաբանելով քաղաքական ենթատեքստ պարունակող միանման շեշտադրումներով: Քննական հայացք ձգելով նախորդ ուսումնասիրողների գիտական նվաճումներին՝ հոդվածում արծարծված հիմնահարցերը դիտարկել ենք պատճառահետևանքային անխզելի կապի մեջ և ժամանակի ռազմաքաղաքական գործիչների սխալների վերհանման, դեպքերի ու զարգացումների վերաիմաստավորման լույսի տակ:

Արտաքին սպառնալիքներն ու Արցախի կառավարությունը: 1918 թ. հունիսի 4-ին Բաթումի պայմանագիրը, փաստորեն, լեգիտիմացրել է թուրք զավթիչների նվաճողական քաղաքականությունը Հայաստանի արևելյան շրջաններում և արհեստական ԱԴՀ իշխանության տարածումը Արաքսից հյուսիս ու Կուրից հարավ ընկած տարածքների վրա: Տեղի հայ ազգաբնակչությունը դիմադրում էր թուրք-թաթարական զավթիչներին: Ինքնահռչակ ԱԴՀ կառավարությունն շտապում էր թուրքական զավթիչների օգնությամբ արյան մեջ խեղդել պատմական Արցախի մի մասի՝ Լեռնային Ղարաբաղի ինքնուրույնությունը: ԱԴՀ-ում փաստացի իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրած թուրքական զինվորականությունը տեղի զինված թաթարներից կազմակերպեց հրոսակախմբեր: Դրանք ու տխրահռչակ «վայրի դիվիզիան» հսկողության տակ էին վերցրել Շուշի–Եվլախ ճանապարհը և Լեռնային Ղարաբաղը կտրել արտաքին աշխարհից: Հայրենի եզերքի զինված ինքնապաշտպանությունը կազմակերպելու ու վարչաքաղաքական ինքնավարությունը պահպանելու նպատակով 1918 թ. հուլիսի 22-26-ին Շուշիում անցկացված Արցախի հայության առաջին համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց վարչաքաղաքական անկախ միավոր, ընտրեց Արցախի ազգային խորհուրդ և Արցախի ժողովրդական կառավարություն: 1918-1920 թթ. Լեռնային Ղարաբաղը, փաստորեն, ուներ պետականության բոլոր հատկանիշները, ներառյալ զինված ուժերն ու օրինական (ընտրված) իշխանությունները:

1918 թ. սկզբներին Շուշիում ստեղծված Անդրկովկասի առաջին ժողովրդավարական կառավարությունը [Մշակ, 30.3.1917, 4, Նեցուկ, 18.8.1917ա,3-4,Նեցուկ, 14.9.1917բ, 4], որը դարձել էր ոչ միայն հայ տոհմիկ բնակչության, այլ նաև եկվոր մահմեդական փոքրամասնության քաղաքացիական իրավունքների արտահայտիչն ու երաշխավորը, հանդիպեց լուրջ խոչընդոտների: Հրահրվելով թուրք գործակալների ու մուսավաթական լրտեսների կողմից՝

մահմեդական բնակչությունը երախտամոռ գտնվեց և բորբոքված կրոնական մոլեռանդությամբ շարունակաբար ապակայունացնում էր առանց այն էլ լարված իրադրությունը: Այս առումով իրեն չարդարացրեց Արցախի կառավարության խաղաղասիրական, հաշտվողական քաղաքականությունը: Ներկայիս ադրբեջանցիների նախնիները չարաշահեցին հայ ղեկավարների բարյացակամությունն ու հանդուրժողականությունը, ինչպես նաև օգտվեցին հայերի ինքնապաշտպանության պասիվ ռազմավարությունից՝ ռազմական նախաձեռնությունը վերցնելով իրենց ձեռքը:

Եթե խոսելու լինենք ճակատագրական թերացումների մասին, ապա հարկ կլինի փաստել, որ հանիրավի չարչրկված սպառազինության խնդիրը լուծելու համար անգամ չզինաթափվեցին ռուսական սահմանապահ 6-րդ գնդի հետ ընկած ստորաբաժանումները[1] [Իշխանյան 1999,89-90,92-93], ժամանակին օգնություն չհասցվեց Բերդաձորի պաշտպաններին, հավուր պատշաճի չկազմակերպվեց Թիֆլիսում կազմավորված Շուշիի գնդի տեղափոխումը նշանակման վայր [Ստեփանեան 1935, № 5, էջ 85] և այլն: Հատկանշելի է, որ Թիֆլիսում բնակվող արցախցիներից կազմակերպված կամավորական գունդն անհրաժեշտության դեպքում երկրամասի հայությանը պետք է պաշտպաներ արտաքին սպառնալիքներից: Մինչև նախանշանակման վայր հասնելը այդ գունդը մարտեր մղեց ՀՀ արտաքին ու ներքին թշնամիների դեմ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, մանավանդ ռուսական հեղափոխությունից հետո տաճկական գործակալներ էին վխտում հավատակիցներով խիտ բնակեցված շրջաններում՝ հետամուտ լինելով Անդրկովկասում հենարան ունենալու և ռուսական կովկասյան բանակի թիկունքին սպառնալիք ստեղծելու, իսկ բարեպատեհ առիթով՝ նաև իրենց զավթողական ծրագրերը դյուրությամբ իրագործելու հեռագնա նպատակներին: Տաճկական զորքերի բացահայտ ագրեսիայի հետևանքով 1918 թ. սեպտեմբերին ընկավ Բաքվի կոմունան, և սրի քաշվեց հայ բնակչության մի մասը [Իշխանեան 1920], ինչը ևս ծանր նստեց ու բացասաբար անդրադարձավ արցախյան իրադարձությունների վրա:

Թուրք զավթիչները մուսավաթականների գործուն մասնակցությամբ Արցախի հայության դիմադրությունը զենքի ուժով ճնշելու նպատակով նախ ավերեցին Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը՝ երկրամասը կտրելով Զանգեզուրից: Աղդամում տեղակայված թուրքական 2-րդ դիվիզիայի հրամանատարը վերջնագիր ուղարկեց Արցախի կառավարությանը՝ չդիմադրելու ու հպատակվելու, միաժամանակ «Անդրանիկից հեռու մնալու» պահանջներով: Արցախի հայության երկրորդ (1918 թ. սեպտեմբերի 7-11), ապա երրորդ (1918 թ. սեպտեմբերի 18-22) համագումարները մերժեցին թուրքերի անօրինական պահանջները: Թուրքական դիվիզիան տեղի զինված թաթարների ուղեկցությամբ 1918 թ. սեպտեմբերի 22-ին ներխուժեց ինքնիշխան Լեռնային Ղարաբաղ՝ լարված հրետակոծությամբ ավերելով Վարազաբուն (Արանզամին), Վարդաձոր (Փիրջամալ), Նախիջևանիկ, Քյաթուկ, Դահրազ, Ղլիժբաղ, Խրամորթ, Խնաբաղ, Քարագլուխ, Փառուխ գյուղերը: Թուրքական զորամասերը գրավված բնակավայրերն ավերելու և կողոպտելու նպատակ հետապնդող թաթարների բազմահազար խուժանի ուղեկցությամբ Շուշի մտան նույն թվականի սեպտեմբերի 25-ին:

[1] Դա հայերի փոխարեն արեցին ադրբեջանցիների նախնիները:

Շուշիի անկման հետևանքները: Թուրքական հրամանատարությունը Շուշիում լուծարեց Արցախի կառավարությունը: Ձերբակալվեց ու բանտ նետվեց ավելի քան 60 մտավորական, այդ թվում՝ Արցախի Հայոց ազգային խորհրդի նախագահ Ե. Իշխանյանը: Շուշիի անկմամբ հանդերձ, Արցախի գավառները մնացին անառիկ ամենուրեք կազմակերպված ինքնապաշտպանական ջոկատների հերոսական դիմադրության շնորհիվ: Այնուհետև ահեղ մարտեր ծավալվեցին Ջրաբերդի, Վարանդայի և Դիզակի շրջաններում: 1918 թ. հոկտեմբերի 18-ին Մսմնա գյուղի մոտ Դիզակի ու Վարանդայի զինված ուժերին հաջողվեց լիովին ջախջախել թշնամու ընտրազորը: Փաստորեն՝ 1918 թ. աշնանը թուրքերի իշխանությունը տարածվում էր միայն Շուշիում:

Վերստին անդրադառնալով Բաքվի անկման ու Շուշիի կորստի պատճառահետևանքային կապին՝ ավելորդ չէ նշել, որ Արցախի հայ ազգաբնակչության ուշքն ու միտքը Բաքվի իր հայրենակիցների գոյապայքարի վրա էր՝ հույս փայփայելով, թե նրանց ինքնապաշտպանության ուժերից տաճկական զավթիչները ջարդուփշուր կլինեն: Այս առումով ուշագրավ է Հ. Ստեփանյանի հետևյալ հուշագրությունը. «Այդ օրերին (1918 թ. հուլիս) Ղարաբաղի և Զանգեզուրի հայկական շրջաններում բացառիկ վիճակ էին ապրում: Մեկ կողմից Բագվի ուղղությամբ դեպի Եվլախ առաջանում էին բոլշևիկները, մյուս կողմից տաճիկները Գանձակին տիրելուց հետո ձգտում էին արշավել Բագվի վրա: Բագվի հայ կռվողների մեծ մասը ղարաբաղցի հայեր էին, որոնց հետ աշխատում էին հաղորդակցության մեջ մտնել ղարաբաղցիք: Այդ օրերին եթե հաջողվեր Բագուն կապել Ղարաբաղի հետ, թուրքերի թիկունքին մեծ հարված կհասցվեր և հայոց համար մեծ ռազմական խարիսխ կստեղծվեր» [Ղազախեցյան (խմբ.) 1933, 42]: Սակայն Բաքվի պաշտպաններին միացած օտարերկրյա ուժերը մերկացրին ճակատը՝ հայ կամավորներին թողնելով միայնակ թշնամու մեծաքանակ ուժերի դեմ հանդիման: Անկասկած, մեծ էր Բաքվի ռազմավարական նշանակությունը: Կորցնելով Բաքուն, հայերը, ցավոք, ձեռքից բաց թողեցին այնպիսի մի հզոր տնտեսական ու քաղաքական գործոն, ինչպիսին նավթն էր, ինչի բացասական հետևանքներն աղետալի էին: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Բաքվի անկումը հանգեցրեց նաև Շուշիի անկմանը: Այս տեսակետից, թերևս, ճիշտ կլիներ Արցախից մարտական գործողությունների սկսման նշաններ ցույց տալ, շեղել տաճկաթաթարական ուժերի ուշադրությունը, հնարավորինս թեթևացնել Բաքվի պաշտպանների, դրանով իսկ՝ Արցախի ինքնապաշտպանության գործը: Սակայն, դժբախտաբար, ո՛չ Արցախից, ո՛չ էլ Գանձակից նման շարժումներ կամ խուսանավումներ չձեռնարկվեցին: Բաքվի պաշտպանները մեկուսի կռվեցին ու պարտվեցին: Հենց դրանից հետո տաճկական զորքերը հնարավորություն ստացան ներխուժելու Արցախ և առանց լուրջ դիմադրության հանդիպելու մտան Շուշի: Ինչքան էլ ջանանք արդարացնել կամ հիմնավորել ժամանակի քաղաքական գործիչների՝ Շուշիի «հանձնման» նպատակահարմարությունը՝ փաստելով պատերազմում Թուրքիայի վերահաս պարտության ակներևությունն ու ակնկալությունները, ինչպես նաև բնակչության զինաթափման ու բանտարկության միջոցով ազատագրական շարժման ակտիվիստների մեկուսացման հետևանքների պայմանական թեթևությունն ու տանելիությունը, միևնույնն է, տաճկական զորքերի մուտքը ծանր հարված էր Շուշիի ինքնապաշտպանությանը, ինչը բարոյահոգեբանական ճնշող ներգործություն ունեցավ ու երկարատև նստվածք թողեց մարդկանց գիտակցության մեջ, իսկ

դրան հակառակ՝ բարձրացրեց մահմեդական բնակչության մարտական ոգին ու ընդլայնեց հավակնությունների շրջանակը:

Առաջին աշխարհամարտի ավարտից ու Մուդրոսի զինադադարի մասին պայմանագրի ստորագրումից (1918 թ. հոկտեմբերի 30) հետո, երբ տաճկական զորքերը հարկադրված էին հեռանալ Անդրկովկասից, բազմաթիվ տաճիկ սպաներ, անգամ երիտթուրքական պարագլուխներ ու ռազմական հրահանգիչներ[1] մնացին մահմեդականներով բնակեցված շրջաններում և շարունակեցին իրենց սև գործը՝ բորբոքելով հավատակիցների մոլեռանդությունը, դավագրգռելով նրանց այլազգիների ու այլադավանների դեմ [ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 212, թ. 42 (հմմտ.՝ Յալանուզյան 2020, Պողոսյան 1990, 58]: Սակայն, մինչև հեռանալը տաճիկները հասցրել էին լուծել ռազմավարական մի շարք խնդիրներ, մասնավորապես մուսավաթականների հետ համագործակցությամբ ծանր հարվածներ էին հասցվել հայկական դիմադրական կարևոր կենտրոններին՝ Բաքվին, Շուշիին՝ հող նախապատրաստելով նորաթուխ Ադրբեջանի կայացման, այսինքն՝ Կովկասում տաճկական առաջնադիրքի (ֆորպոստի) հաստատման համար: Հետագա, մանավանդ թուրք-հայկական պատերազմին և Մոսկվայի ու Կարսի չարաղետ պայմանագրերին հաջորդած իրադարձություններն անառարկելիորեն ապացուցում են ոչ միայն Թուրքիա-Ադրբեջան հանցավոր կապերը, այլև բացահայտում տաճկական ռազմամոլների հեռագնա նպատակները Ադրբեջանի ստեղծմամբ Կովկասում իր մշտական աջակիցն ու հենարանն ունենալու, Իրանի նկատմամբ իր տարածքային ու էքսպանսիոնիստական հավակնություններին հագուրդ տալու ու պանթուրանական ծավալապաշտ զառանցանքները կենսագործելու համար: Արցախյան պատերազմի տարիներին ժամանակակից Թուրքիայի բռնած բացահայտ հակահայկական դիրքորոշումը՝ առնվազն 2010-ական թվականներից սկսած, Ադրբեջանում ու հատկապես Նախիջևանում իր ռազմաքաղաքական ազդեցության մեծացումը գալիս էին մեկ անգամ ևս փաստելու աշխարհաքաղաքական զարգացումներում, ազդեցության գոտիների համար պայքարում ու շահերի բախման կիզակետում Ադրբեջան-Թուրքիա ագրեսիվ համագործակցության ակունքներն ու հարաճուն վտանգը: Այդ մասին հայ պատմաբանները բազմիցս ահազանգել են ներկայացուցչական գիտաժողովներում [Հարությունյան 2010ա, Հարությունյան (կազմ. և խմբ.) 2021ա], հեղինակավոր պարբերականներում ու գիտական ամսագրերում [Микаелян, Хуршудян 1988, 43-56, Հարությունյան 2008, 71-78, Սարգսյան 1989, 63-104], ինչպես նաև առանձին գրքերում [Галоян, Худавердян (ред.) 1988, Սիմոնյան 1991, Ուլուբաբյան 1994, Ղուլյան 2009, Հարությունյան 2019] տպագրված հիմնադրույթներով, սակայն դրանք հանիրավի անտեսվել են որոշում կայացնող ու իշխանություն ունեցող գործիչների կողմից, ինչով նաև կարելի է բացատրել 2016, 2020 և 2023 թթ. ռազմարշավներից պետության (ինչպես ԼՂՀ, այնպես էլ ՀՀ] պաշտպանությանն անբավարար պատրաստությունը՝ իր աղետալի հետևանքներով:

Եզրակացություններ:

1918 թ. թուրքական ագրեսիայի ու նվաճողական քաղաքականությունը ռազմաքաղաքական տեսանկյունից դիտարկելով՝ կարելի է եզրակացնել, որ Թուրքիայի ու Ադրբեջանի հանցավոր դաշնակցությունը մեծ վտանգ է ներկայացնում հայկական

[1]Այդ մասին են վկայում արխիվային փաստաթղթերը [Микаелян(ред.) 1992, Վիրաբյան 2003]

պետականության և հայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար: Հետևաբար մինչև հակահայկական ու ագրեսիվ այդ դաշինքի կազմաքանդումը հայկական արտաքաղաքական ու ներքաղաքական օրակարգերը սպասարկելիս ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը համակողմանիորեն պետք է հաշվարկի թուրք-ադրբեջանական տանդեմի տարածաշրջանային քաղաքականության հարուցած բոլոր վտանգները աշխարհաքաղաքական սրընթաց զարգացումների ու մարտահրավերների համատեքստում: Առաջանցիկ գերխնդիրներից են հայկական պետականության ամրապնդումը, ինքնորոշման սկզբունքի հիման վրա Արցախի Հանրապետության կարգավիճակի և արցախցիների վերադարձի իրավունքի միջազգային ճանաչման հասնելը, Սփյուռքի ներուժի ու հայրենիքի բարգավաճմանը նրա ներգրավվածության ընդլայնումը:

Շուշիի 1918 թ. անկման դասերից հատկանշելի են զիջողականության անթույլատրելիությունը ու վերահաս վտանգները դիմագրավելուն համակողմանի պատրաստ լինելու հրամայականը:

Գրականության ցանկ

Աբրահամյան Հ. 2003, Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա (1917-1923), Երևան, «Զանգակ-97», 340 էջ:

Բեհբուդեան Ս. 2001, Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան. գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933), Երևան, 977 էջ:

Դէպքերը Ղարաբաղում. Շուշու կոտորածը, «Մշակ», 4.3.1920, № 9, 2-3:

Թումյան Հ. 2008, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում. 1917-1920 թթ., պատմական ակնարկ, խմբ.՝ Ա. Բ. Սարգսյան, Երևան, «Անտարես», 332 էջ:

Իշխանեան Ե. 1999, Լեռնային Ղարաբաղ. 1917-1920, խմբ.՝ Հ. Ա. Աբրահամյան, Կ. Հ. Ղահրամանյան, Երևան, «Հայաստան», 732 էջ:

Իշխանեան Բ. 1920, Բագուի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիր. սեպտ. անցքերի 1918 թ., Թիֆլիս, Բագուի հայոց հրատ., 188 էջ:

Լեո 1925, Անցյալից: Հուշեր, թղթեր, դատումներ, խմբ.՝ Ա. Կարինյան, Թիֆլիս, հրատ. «Խորհրդային Կովկաս»-ի, 482 էջ:

Կիսիբեկյան Ա. 2011, Հուշեր, 2 գրքով, գիրք I, Երևան, 519 էջ, գիրք II, Երևան, 606 էջ:

ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 212, թ. 42 (հմմտ.՝ Յալանուզյան Մ., Ադրբեջանը պատրաստ է գրոհել, https://republic.mediamax.am/story/98/[ներբեռնումը՝ 21.02.2020 թ.]):

Հարությունյան Ա. 1997, Նամակ Նոյին, Երևան, «Ապոլոն», 345 էջ (Ես դեռ չեմ վերադարձել երկիրս), https://granish.org/artem-harutyunyan-letter-to-noah/(ներբեռնումը՝ 21.10.2023 թ.):

Հարությունյան Ա. 2007, Հրկիզված Շուշի (1920) քաղաքի թեման Օսիպ Մանդելշտամի պոեզիայում: Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 282-294:

Հարությունյան Հ. 2013, Շուշին Արցախյան գոյապայքարում (1918–1920 թթ.), «Պատմաբանասիրական հանդես», № 1, էջ 22-43:

Հարությունյան Մ. 2008, Արմենոցիդի քաղաքականության ուրացումը և ապստամբության առասպելը, «Լրատու» (գիտական հոդվածների ժողովածու), Ստեփանակերտ, № 1, էջ 71-78:

Հարությունյան Մ. 2010, Շուշիի մարտյան ողբերգության պատմագրության հիմնահարցերը, «Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ», 2010 թ. մարտի 21-24-ին Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ: Խմբ. Մ. Ա. Հարությունյանի «Կաճառ» տարեգիրք, գիրք 4 (47-58), Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., էջ 45-60:

Հարությունյան Մ. 2015ա, Անցյալը մեզ հետ է. վերագնահատումներ, խորհրդածություններ, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոն, 96 էջ:

Հարությունյան Մ. 2015բ, Հայերի ցեղասպանության թուրքական քաղաքականության դրսևորումը Շուշիում, Դպրատուն (գիտական հոդվածների ժողովածու), № 3, 12-20:

Հարությունյան Մ. 2019, Արցախյան շարժման պատմագրության հիմնահարցերը, մաս 1-ին, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 392 էջ:

Հարությունյան Մ. (կազմ. և խմբ.) 2021ա, Ադրբեջանի ցեղասպանական վարքը. Պատմություն և արդիականություն (իրավաքաղաքական գնահատականից մինչև միջազգային դատարան): Միջազգային առցանց գիտաժողով՝ նվիրված Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին (Շուշի, 2020 թ. հուլիսի 15-16), զեկուցումների ժողովածու, Երևան, «Էդիտ պրինտ» հրատ., էջ 352:

Հարությունյան Մ. (կազմ. և խմբ.) 2021բ, Արցախի և Զանգեզուրի հայ ազգաբնակության զինված ինքնապաշտպանության պատմությունից (1918-1920 թթ.): Վավերագրեր և հուշագրություններ / Կազմ.՝ Մ. Ա. Հարությունյան, «Կաճառ» տարեգիրք, Գիրք 15(179-190), Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրտարակչություն, 256 էջ:

«Յառաջ», 26.2. 1920, № 42, էջ 1:

Ղազախեցյան Վ. (խմբ.) 1993, Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ.: Փաստաթղթեր և նյութեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1-2, փաստաթուղթ № 14, էջ 22-392:

Ղուլյան Յու. 2009, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից. 1918-1920 թթ., Երևան, «Եգեա», 452 էջ:

Միքայելյան Ա. 1923, Ղարաբաղի վերջին դեպքերը, «Հայրենիք», Բոստոն, № 7, էջ 156-167, № 8, էջ 110-122, № 9, էջ 115-121, № 11, էջ 110-119, № 12, էջ 118-127:

Մշակ (Թիֆլիս), 30.3.1917, N 67, էջ 4:

Շուշու տրագեդիան. խուճապ, Մշակ, 13.6.1920, № 37, 2-4 (արտատպություն «Սիւնիք» թերթից):

Պողոսյան Հ. 1990, Անդրանիկ զորավարի մի նամակը գեներալ Բագրատունուն, «Մանկավարժ», № 8, էջ 58-62:

Սիմոնյան Հ. 1991, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 632 էջ:

Սողոմոնյան Մ. 1972, Լեռնային Ղարաբաղում թուրքական ինտերվենցիայի հարցի շուրջը (1918 թ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 185-196:

Ստեփանեան Յ. 1934, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», Բոստոն, № 1, էջ 87-95, № 2, էջ 83-93, № 3, էջ 83-93:

Ստեփանեան Յ. 1935, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», Բոստոն, № 3, էջ 103-113, № 4, էջ 89-101, № 5, էջ 80-89, № 6, էջ 100-108, №7, էջ 122-131:

Վիրաբյան Ա. 2003, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920 թթ., կազմ.՝ Միրզոյան Ս., Ղազիյան Ա., Երևան, ՀՀ պատմութ. արխիվ, 523 էջ:

Տեր-Դանիելյան Մ. (Արամայիս) 1993, Ղարաբաղի տագնապը (պատմության համար). օրագրություն (26 ապրիլի-26 հուլիսի 1919 թ.), խմբ.՝ Մ. Մ. Արշակյան, Երևան, «Հայաստան», 116 էջ:

Ուլուբաբյան Բ. 1994, Արցախյան գոյապայքարը, Երևան, «Գիր գրոց», 300 էջ:

Мандельштам О., 1990, Сочинения в 2-х т., т. 1, Москва, Художественная литература, 638 с. (электр. версия: https://rvb.ru/20vek/mandelstam/dvuhtomnik/01text/vol_1/01versus/0188.htm [дата обращения: 13.04. 2021]).

Микаелян В., Хурщудян Л. 1988, Некоторые вопросы истории Нагорного Карабаха, Вестник общественных наук, № 4, с. 43-56:

Галоян. Г., Худавердян К. (ред.) 1988, Нагорный Карабах (Историческая справка), Ереван, Изд. АН Арм. ССР, 96 с.

Микаелян В. А.(ред.) 1992, Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ереван, Изд-во АН Армении, 756 с.

Факты о геноцидной политике Азербайджана. Составитель, ответственный редактор, автор вступительной статьи и комментария кандидат исторических наук, доцента М. А. Арутюнян. Качар (Ежегодник Научного Центра Качар). Книга 12 (143-154), 2018, Шуши, Издательство научного центра «Качар», 2020, 240 с.

Хзмалян Т., 1991, «Фаэтонщик» - стихотворение О. Мандельштама о Нагорном Карабахе. Вестник Ереванского университета, № 1, с. 89-92.

Эвоян В., Баликян О. 1989, Из истории Нагорного Карабаха (1918-1921 гг.), Вестник архивов Армении, № 1, с. 86-130:

Hovannisian R. 1972, The Republic of Armenia. v. 1. The first year, 1918 - 1919. University of California Press, B.. L.A. L., 592 p.

Melik-Shahnazarov Z. 1996, Sketches of Karabakh Soldier: Memoirs of a Participant in the Events of 1918-1920 in Nagorno Karabakh, Moscow, 103 p.